



ՄԱՐԻ ԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ԿՐԹՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

1 ղեկավարների

«Հայկական հանրագիտարան» հրատարակչության աշխատակազմին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայկական հանրագիտարան» հրատարակչության աշխատակազմին՝ ուղեկցությամբ գլխավոր խմբագիր Յովհաննես Այվազյանի:

Հ. Այվազյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց «Հայկական հանրագիտարանի» գործունեությունը եւ մասնավոր անդրադարձ կատարեց վերջերս լույս տեսած «Գրատպություն եւ գրքարվեստ» հանրագիտարանի հրատարակչությանն ու առաջիկա ծրագրերին:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց «Հայկական հանրագիտարան» հրատարակչության աշխատակիցներին՝ իրենց աշխատանքն ու առաքելությունը նվիրումով եւ պատասխանատվությամբ իրականացնելու համար: Վեհափառ Հայրապետը կարեւորեց անցած տասնամյակների ընթացքում հրատարակչության կողմից արձանագրված ձեռքբերումները:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ «Հայկական հանրագիտարան» հրատարակչության գործակցության մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությունը՝ հրատարակչական, կրթական, սոցիալական եւ տարբեր այլ ոլորտներում: Անդրադարձնալով հայ ժողովրդի կյանքում եկեղեցու առաքելությանը՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայոց եկեղեցու նպատակն է առաջին հերթին կերտել հայ մարդու կերպար՝ իր բարոյական բարձր արժեքներով եւ նկարագրով, հայրենիքի նկատմամբ սիրով եւ նվիրումով:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց հրատարակչության աշխատակիցների հարցերին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը:

հաստատեցին, որ ԼՂՀ հիմնահարցը կարող է լուծվել բացառապես խաղաղ ճանապարհով: Այս առիթով Նորին Սրբությունը ներկայացրեց նաեւ այս ուղղությամբ տարածաշրջանի հո-

գետոր առաջնորդների գործադրած ջանքերը: Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը:



4 ղեկավարների

Ռուս մտավորականների ներկայացուցչական դասվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան ժամանած ռուս մտավորականների ներկայացուցչական պատվիրակությանը՝ ուղեկցությամբ գրող, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Չորի Բալայանի:

Հանդիպմանն անդրադառնալով հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ ձեւավորված պատմական սերտ կապերին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ դրանք դարավոր խորը ունեն եւ մշտապես հատկանշված են եղել ջերմությամբ եւ եղբայրական սիրով: Գարեգին Բ Հայրապետը փաստեց, որ «Խուրդոժեստվենայա լիտերատուրա» հրատարակչության կողմից Չորի Բալայանի ստեղծագործությունների ութ հատորյակի լույս ընծայմամբ՝ Ռուսաստանի ժողովուրդը Նորովի հաղորդ ու մասնակից կդառնա

հայ ժողովրդի մաքառումներին եւ նվիրական իղծերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունները, նաեւ շնորհիվ նման այցերի եւ գործակցության, անխաթար կերպով կշարունակվեն գորանալ եւ ամրանալ՝ նրանց առաջնորդելով դեպի Նոր ձեռքբերումներ, դեպի դարեր ու հազարամյակներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց տիար Չորի Բալայանին՝ հայ ժողովրդին, հայրենիքին եւ եկեղեցուն բերած նրա նվիրյալ ծառայության համար:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը:



7 ղեկավարների

ՌԴ կենսրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Չուրովին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինսկին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ պատմականորեն հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ ձեւավորված եղբայրական

ջերմ ու գործակցային կապերին, վստահություն հայտնեց, որ դրանք առավել կընդլայնվեն ու կամրապակվեն՝ ընդգրկելով նորանոր ոլորտներ:

Իր հերթին Վլադիմիր Չուրովը, խոսելով երկու ժողովուրդների դարերի խորքից եկող բարեկամության մասին, ընդգծեց նաեւ միջմշակութային համագործակցության առավել խորացման անհրաժեշտությունը:

Շարունակությունը՝ էջ 2



3 ղեկավարների

Զեխիայի Հանրադեսության Պատգամավորների դպրատնի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Զեխիայի Հանրապետության Պատգամավորների պալատի նախագահ Յան Համաչեկի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ ընդգծեց, որ փոխայցելությունների շնորհիվ բարեկամ երկու ժողովուրդների միջեւ կապերն ավելի են ընդլայնվում եւ խորանում: Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց, որ երկու երկրների արժեհամակարգում առկա են մեծ ընդհանրություններ՝ խարսխված քրիստոնեական արժեքների վրա, ինչը եւս պարարտ հող է ստեղծում համագործակցության համար:

Անդրադառնալով նյութերին իր հրավերով Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ժամանած Նորին Սրբազնություն Չեխիայի կարդինալ, Պրահայի արքեպիսկոպոս Դոմինիկ Դուկայի այցին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց Հայ Առաքելական եւ Զեխիայի Կաթոլիկ եկեղեցիների միջեւ ձեւավորված հարաբերությունները, որոնք գործնական նախաձեռնություններով առավել կգորանան:

Նորին Սրբությունն իր մասնավոր գնահատանքը հայտնեց նաեւ Զեխիայի իշխանություններին՝ Զեխիայի հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար՝ գոհունակությամբ վկայակոչելով այն իրողությունը, որ չեխահայության հոգեւոր կյանքի արդյունավետ կազմակերպման համար Կաթոլիկ եկեղեցու կողմից հայ համայնքին Պրահայում եկեղեցի է տրամադրվել:

Իր հերթին պրն Յան Համաչեկն ուրախություն հայտնեց հանդիպման առիթով: Զեխիայի Պատգամավորների պալատի նախագահն անդրադարձավ Հայաստան այցի արդյունքներին եւ հայ-չեխական գործակցությանը տարբեր ոլորտներում, տեղեկություններ փոխանցեց Զեխիայի ժողովրդի հոգեւոր կյանքի, եկեղեցի-պետություն հարաբերությունների մասին:

Զրույցի ընթացքում խոսվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Այս առնչությամբ Զեխիայի Պատգամավորների պալատի նախագահը նշեց, որ հայ եւ չեխ ժողովուրդներն անցյալում շատ ողբերգական էջեր են ունեցել եւ լավ գիտեն խաղաղության արժեքը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ պրն Յան Համաչեկը

7 դեկտեմբերի

ՌԴ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ԽԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Սկզբը՝ էջ 1

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ միջեկեղեցական հարաբերություններին, նաև ԼՂՀ հակամարտության խաղաղ կար-

գավորման գործընթացին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտա-
քին հարաբերությունների և արարողակարգի
բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը:



8 դեկտեմբերի

ՀԱՇՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՇՈՒՅԱՆ ԱՆՊԱՄՆԵՐԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ
մարմակրթական ընդհանուր միության
(ՀԱՇՎ) կենտրոնական վարչության անդամնե-
րին՝ ուղեկցությամբ ՀԱՇՎ կենտրոնական վար-
չության ատենապետ Գառնիկ Մկրտիչյանի:

Ներկայացնելով վարչության անդամներին՝
Գառնիկ Մկրտիչյանն անդրադարձավ ՀԱՇՎ

վարչության առաքելությանն ու կազմակերպա-
կան խնդիրներին, համագործակցությանը Հա-
յոց Եկեղեցու թեմերի հետ: Նա մասնավորա-
բար նշեց, որ վարչության բոլոր անդամները
մեկտեղումը հայրենիքում լրացուցիչ եռանդ է
հաղորդում ամենքին՝ մեկ ջայլով մոտենալով
նրանց հիմնական առաքելությանը, այն է՝ հայ



երիտասարդին պահել մաքուր ու անբասիր,
հավատարիմ Նախնայաց տուրք ավանդներին ու
բարքերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրապե-
տական օրհնությունը փոխանցելով ՀԱՇՎ վար-
չական մարմնի նոր անդամներին, կարեւորեց
նրանց այցը համայն հայության հոգեւոր կենտ-
րոն և գնահատեց այն դերակատարությունը,
որ վերջիններս ունեն հայ երիտասարդի նկա-
րագրի կերտման, նրա սրտում հոգեւոր-բարո-
յական արժեքների ձեւավորման աստվածահա-
ճո գործում: Անդրադառնալով ՀԱՇՎ կենտրո-
նական վարչության աշխատանքներին՝ Նորին
Սրբությունը հավելեց, որ Հայ Եկեղեցին մշա-

տապես առաջնահերթ կարեւորություն է ընծա-
յել մատաղ սերնդի կրթության վեճ ու նվիրա-
կան առաքելությանը և ողջունել դրանում մաս-
նակից հայորդիներին, ովքեր անձնվիրաբար
կյանքի են կոչում երիտասարդների հայրենա-
սիրական աշխարհայացքի կերտումը:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաև
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀԱՇՎ հովանու ներ-
քո գործող հայորդյաց տների գործունեությանը
և այնտեղ ջանքովո՞ղ հոգեւոր-հայրենասիրա-
կան կրթությանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտա-
քին հարաբերությունների և արարողակարգի
բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը:

9 դեկտեմբերի

ԹԵՒՐԱՆԻ ՓՈԽՄԱՂԱՐԱՊԵՏԻՆ

Ամենայն Հայոց Կա-
թողիկոսն ընդունեց
Թեւրանի փոխքաղա-
քապետ ղոկտ. Մահ-
մուդ Սալահին՝ ուղեկ-
ցությամբ ՀՀ-ում Իրա-
նի Իսլամական Հան-
րապետության արտա-
կարգ և լիազոր դես-
պան Սեյեդ Քազեմ Սա-
ջադիի:

Ողջունելով պաշտո-
նական պատվիրակու-
թյան այցը համայն հա-
յության հոգեւոր կենտ-
րոն՝ Ամենայն Հայոց
Հայրապետն ընդգծեց,
որ այսպիսի յուրաքանչյուր այցելություն նոր
ներդրում է երկու երկրների միջև ձեւավորված
համագործակցության մեջ:

Այս կապակցությամբ Նորին Սրբությունը հա-
վելեց, որ Հայ Եկեղեցին եւս իր նպատակը պետք
է բերի այդ կապերի ամրապնդման գործին: Ա-
մենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ
անդրադարձավ Անի ալ-Բեյթի Համաշխարհա-
յին համագումարի գլխավոր քարտուղար Այա-
թոլլա Մոհամմադ Հասան Ախթարիի Հայաս-
տան կատարած այցին՝ նշելով, որ միջկրոնա-
կան շփումները նույնպես կարեւոր մաս են
կազմում երկու ժողովուրդների միջև առկա
բարեկամության:

Հանդիպմանը ղոկտ. Մահմուդ Սալահին, ու-
րախություն հայտնելով Մայր Աթոռ այցելելու
առիթով, Ամենայն Հայոց Հայրապետին փո-
խանցեց Թեւրանի քաղաքապետի ողջունները:
Փոխքաղաքապետը մասնավորապես խոսեց
Հայաստանի և Իրանի ընդհանրությունների,



մշակութային առնչակցությունների, ինչպես
նաև Իրանում քրիստոնյա եւ իսլամ ժողովուրդ-
ների խաղաղ ու համերաշխ համակցության
մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահա-
տանքով արձանագրեց նաև Իրանի իշխա-
նությունների կողմից հայկական եկեղեցի-
ների և մշակութային կենտրոնների
նկատմամբ ցուցաբերվող հոգածու վերա-
բերմունքը:

Զրույցի ընթացքում Գառնիկն Բ Կաթողիկոսը
և ղոկտ. Մահմուդ Սալահին անդրադարձ կա-
տարեցին աշխարհում տեղ գտնող ծայրահե-
ղականության դրսևորումներին՝ վստահու-
թյուն հայտնելով, որ միջազգային հանրության
ջանքերով մարդկային կյանքից կվերացվեն
նման երեւոյթները:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտա-
քին հարաբերությունների և արարողակարգի
բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը:

ՎԵՐՈՒՄ ԽԱՎԵՐԱԿԱՆ ԴԵՄՈՆՈՂՐԱՏՈՒՄԻ ԺԱՊՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՐ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



Դեկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունե-
ցավ ՀՀ ՁՈՒ հոգեւոր սպասավորների տարեկան ամփո-
փիչ ժողովը՝ գլխավորությամբ ՀՀ ՁՈՒ հոգեւոր առաջնորդ
Վրթանես եպս. Աբրահամյանի:

Բանակային կորպուսների հոգեւոր պատասխանատունե-
րը հանդես եկան հաշվետու զեկույցներով՝ ներկայացնելով
տարբեր գործառնություն ծառայող եկեղեցականների գոր-
ծունեությունը:

Ժողովի ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց
զինվորների հետ տարվող հոգեւոր-դաստիարակչական աշ-
խատանքներին, քննարկվեցին նաև առաջիկա ծրագրերին և
ազգային-եկեղեցական տոներին առնչվող կազմակերպա-
կան հարցեր:

Վերջում Վրթանես սրբազանն իր օրհնությունը բերեց բա-
նակի եկեղեցականներին՝ հորդորելով առավել մեծ նախա-
նախնայությամբ շարունակել իրենց նվիրյալ և պատասխա-
նատու ծառայությունը:

ՀՀ ՁՈՒ-ում այսօր հոգեւոր սպասավորություն է իրակա-
նացնում 61 եկեղեցական:



«ԵՎՐՈՊԱՅԻ ԴԵՄՈՆՈՂՐԱՏՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ»
ԿԱԶՄԱԿԵՐԱՊՈՒՅԱՆ
ԱՆՊԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՐ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 10-ին «Եվրոպայի դեմոկրատ
ուսանողներ» կազմակերպության խորհրդի՝
Հայաստանում գումարված հավաքի մասնա-
կիցները, ուղեկցությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր
Կարեն Ավագյանի, այցելեցին Մայր Աթոռ Սբ.
Էջմիածին:

Մայր տաճար այցելությունից հետո «Վաչե և
Թամար Մանուկյան» մատենադարանում հան-
դիպում ունեցան Մայր Աթոռի արտաքին հարա-
բերությունների և արարողակարգի բաժնի
տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանի հետ:

Նաթան սրբազանը, Ամենայն Հայոց Կաթողի-
կոսի ողջույններն ու հայրապետական օրհնու-
թյունը փոխանցելով ամենքին, գոհունակու-
թյամբ հաստատեց, որ երիտասարդության այցը
համայն հայության հոգեւոր կենտրոն կարեւո-
րագույն իրողություն է, քանի որ տարբեր երկր-
ներ ու պետություններ ներկայացնող երիտա-

սարդները հնարավորություն են ունենում մոտի-
կից ծանոթանալու հայ ժողովրդի նվիրական
արժեքներին ու սրբություններին: Սրբազանն ըն-
դգծեց նաև, որ տարբեր երկրներում նման հա-
վաքների կազմակերպման շնորհիվ երիտա-
սարդները կարող են լավագույնս ծանոթանալ
միմյանց հետ՝ հաղորդ դառնալով միմյանց ար-
ժեքներին, մշակույթին և աշխարհընկալմանը:


Անդրադառնալով Հայ Եկեղեցու և հայ ժո-
ղովրդի պատմությանը՝ Նաթան սրբազանը ներ-
կաններին պատմեց Հայ Եկեղեցու ստանձնած ա-
ռաքելության մասին, ինչպես նաև «Եվրոպայի
դեմոկրատ ուսանողներ» կազմակերպության
խորհրդի անդամներին հաջողություններ մաղ-
թեց և հայցեց, որ Աստուծո գորակցությամբ վեր-
ջիններին կողմից իրականացվելիք ծրագրերը
կյանքի կոչվեն՝ ի նպաստ երիտասարդության
կյանքի առաջխաղացման և բարորության:



Սրբազան հայրը պատասխանեց նաև ուսա-
նողների հարցերին, որոնք վերաբերում էին հայ
երիտասարդության հոգեւոր կյանքին, պատ-
մության ընթացքում և հատկապես խորհրդա-
յին տարիներին Հայ Եկեղեցու դիմագրաված
ղժվարություններին, հայ ինքնության պահպա-

նությանը, Հայ Եկեղեցու կողմից քարոզչության
համար գործառնվող ժամանակակից տեղեկատ-
վական միջոցներին:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՐԻ ՍՈՐԻՐ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



Սկզբը՝ թիվ 22

1915 թ. մայիսի սկզբին ռուսական զորքերը գրավում են Բուլանուխը, ինչի հետևանքով տեղի քրդական ջոկատները նահանջում են հնուս: Նրանք մինչև մայիսի 20-ը ասպատակության են ենթարկում գավառի բոլոր հայաբնակ գյուղերը: Ու թեպետ շատ վայրերում հայերը դիմում են ինքնապաշտպանության, սակայն քչերին է հաջողվում փրկվել: Փրկվում են հիմնականում գավառի արեւելյան մասում գտնվող գյուղերի բնակիչները:

1916 թվի փետրվարի սկզբին ռուսական զորքերը գրավում են հնուսը: Մինչ այդ նահանջող թուրքերն ու քրդերը սպանում են քաղաքում ողջ մնացած գրեթե բոլոր հայերին:

1917 թվին փոքրաթիվ հայեր վերադառնում են հնուս:

1917 թ. ապրիլի 26-ին ժամանակավոր կառավարության հրապարակած որոշումով հաստատվեց Արեւմտյան Հայաստանի եւ գրաված մյուս վայրերի կառավարման նոր ձեւ, որով, մինչեւ Արեւմտյան Հայաստանի կարգավիճակի վերջնական որոշելը, ազատագրված տարածքում ստեղծվեց հայկական երեք մարզ՝ Երզրում, հնուս եւ Վան, որոնք կառավարվելու էին գեներալ կոմիսարի եւ նրա երկու օգնականի միջոցով (գեներալ Պ. Ավերյանով, քաղաքացիական գծով տեղակալ՝ Հակոբ Չավրյան): Որոշվել էր նաեւ գաղտնի հրահանգով, մինչեւ հատուկ որոշում կայացնելը, թուրքերին, լազերին ու քրդերին, որոնք փախել էին թուրքական զորքի հետ, չթույլատրել վերադառնալ այդ մարզերը՝ հնարավոր ազգային բարոյացումներից ու ընդհարումներից խուսափելու համար: Այս ամենը նպաստեց կոտորածներից մի կերպ ուշքի եկած հնուսի վերածնունդին:

Ջարդից եւ տարագրությունից փրկվածները վերադառնում են իրենց ավերակ երգիկների տակ՝ վերաշինելով այն, եւ ավանդական փյունիկի նման՝ հնուսն սկսեց հառնել իր մոխիրներից: Շատ կարճ ժամանակում գյուղերն սկսեցին շենանալ, նրանց մի մասում հիմնվեցին որբանոց-դպրոցներ, գաղթականներ եւ այլն: Այդ գյուղերը դարձան ազգային կյանքի վերագարթների կենտրոններ: Հայրենի երգիկից կենդանություն ավետող խնկաբույր ծուխն սկսեց բարձրանալ՝ գալիք օրերի սրբազան հավատքի ներշնչումով: Դժբախտաբար շատ կարճ տեւեց վերաշինության այս շրջանը. 1918 թ. Մեծ Նահանջը, խնուսցիների խյակները քշելով, տարավ նրանց՝ բնակեցնելով Արագածի փեշերին, եւ նայելով Բուրաբնյա սարի հազարամյա ճակատին, ցատկում եւ վրեժխնդությամբ առլեցուն, նրանք վերադարձի հույսն ու սպասումը պատգամեցին իրենց ժառանգներին: Նշան Պեշիկաշյանի խոսքերով ասած՝ «Սիրելի՛ խնուսցիներ, սրբազան հնուսը պահեք ձեր հոգիներում, պահպանեք եւ փոխանցեք ձեր գավակներին՝ իբրեւ նվիրական նկար, իբրեւ տուրուբերանյան տապանակ ուխտի, իբրեւ երգասաց երազ, որ պիտի իրականանա, եթե այն ականա լքելուց հետո չլքենք նաեւ կամավորապես: Ու կմաղթենք մոլեգնորեն:

Երկն երկին ու երկիր՝

Հիսուսով,

Երկն եւ ձեր ծով

հոգին՝ հնուսով»:

Խնուսցիները 1918 թվի փետրվարին, թուրքերի հարձակման հետեւանքով, դարձյալ գաղթում են Անդրկովկաս:

Խնուսի 26 հազ. հայ բնակչությունից կարողանում են ազատվել միայն 3 հազարը: Ազատված խնուսցիները կազմում են խնուսցիների գունդը, որը թուրքական

արշավանքի օրերին (1918 թ.) հերոսաբար կռիվ է մղում Սարդարապատում, Դարաքիլիսայում եւ Բաշ Ապարանում՝ Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) անկախության համար (1920 թ.)՝ ապահովելով մայիսյան հաղթանակներն ու հայտնի առաջին հանրապետության ծնունդը:

Խնուսցիներն ու նրանց ժառանգներն ակտիվորեն մասնակցեցին ոչ միայն առաջին հանրապետության՝ Խորհրդային Հայաստանի պետական սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը, այլեւ 20-րդ դարավերջի՝ արցախյան ազատագրական պատերազմին, երրորդ հանրապետության անկախության նվաճմանը եւ երկու հանրապետությունների (ՀՀ եւ ԼՂՀ) կայացման ու զարգացման գործին:

Ներկայումս Խնուսը հիմնականում քրդաբնակ է եւ մտնում է Երզրումի իլի կազմի մեջ:

Խնուս գավառի հայկական գյուղերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին

Հայ ժողովրդի ազատագրական պայքարով ու մաքառումներով հարուստ հազարամյակների պատմության մեջ 1915 թ. դարձավ ամենամռայլ էջը: Օսմանյան Թուրքիան՝ հանձինս երիտթուրք հանցավոր պարագլուխների, օգտվելով Առաջին աշխարհամարտում ստեղծված հարմար ռազմաքաղաքական իրադրությունից, իրականացրեց Նախորդ ծրագրված ցեղասպան քաղաքականությունը՝ հայոց Մեծ եղեռնը, որին զոհ գնաց ավելի քան 1,5 մլն արեւմտահայ: Հայ ժողովուրդը, նրա հասարակական-քաղաքական ուժերը, հատկապես՝ ազգային երեք կուսակցությունները՝ դաշնակցությունը,



ինչպիսյաններն ու արմենականները, ինչպես նաեւ հայոց եկեղեցական կառույցները, հանկարծակի գալով, ցավոք, չկարողացան արժանի կերպով դիմագրավել այդ ամենահաճախ փորձությունը:

Արեւմտահայության եւ նրա քաղաքական ու եկեղեցական կառույցների ճակատագրական վրիպումն արդյունք էր 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման թուլորմբռնման: Այն ջլատեց արեւմտահայության մարտական ու քաղաքական ուժերը: Ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլեւ հոգեւոր ու ազգային-քաղաքական ղեկավարությունը հավատաց երիտթուրքերի կողմից առաջ քաշած ազատության, արդարության եւ հավասարության կեղծ հեղափոխական լոզունգներին: Հեղաշրջման միջոցով եւ այս ապակողմնորոշիչ լոզունգներով իշխանության եկած երիտթուրք ոճրագործները կարողացան զինաթափել արեւմտահայությանը ոչ միայն ռազմական առումով, այլեւ հոգեբանորեն. ողջ ֆիդայությունը թողեց գեները եւ անցավ խաղաղ աշխատանքի: Դժբախտաբար երբ Թուրքիան ներքաշվեց Առաջին աշխարհամարտի մեջ, համազգային թմբիրը դեռեւս շատ ուժեղ էր: Ուստի պատահական չէ, որ հայոց ցեղասպանության այնպիսի նախանշաններ ու նախապատրաստություններ, ինչ-

պիսիք էին արեւմտահայության տնտեսական լիակատար քայքայումն ու զորահավաքի անվան տակ 20-45 տարեկան ամբողջ արական բնակչության հավաքումն ու ոչնչացումը, թույլ չտվեցին հաղթահարել այդ մահացու թմբիրը:

Բացի այդ, բացասական դեր խաղացին նաեւ հասարակության տարբեր շերտերի միջեւ գոյություն ունեցող հակասություններն ու անմիաբանությունը: Ստեղծված այսպիսի իրադրության մասին է ներկայացնում դեպքերի ժամանակակից ու մասնակից՝ ազգային, պետական ու քաղաքական նշանավոր գործիչ Կարո Սասունին՝ նշելով. «Հայ պաշտոնական շրջանները՝ Պոլիստեն մինչեւ հեռավոր գավառները, հնազանդություն, համբերություն եւ խոհեմության հորդոր կարողացին հայ ժողովրդի գլխուն, երբ անգինվոր, շալակավոր եւ պարտադիր աշխատանքի բանվոր հայ մարդը, պարեն տալով, կմախք կդառնար եւ իր դառնությունները կհայտնէր: Եղեռնը փաստորեն կսկսեր զորահավաքի օրերեն, հայ ժողովուրդը ֆիզիկապես եւ բարոյապես կկոտորակվեր եւ սակայն կհամբերեր՝ կարծելով, թե դանակը դեռ ոսկորին հասած չէ: Վտանգված հայությունն այսպես կմտածեր թե՛ կեղրոնի եւ թե՛ ծայրագավառներուն մեջ:

Շարունակությունը՝ էջ 4



Եկտեմբերի 5-ին Բաթումիում բացվեց Վիրահայոց թեմի՝ Ալեքսանդր Մանթաշովի անվան կրթամշակութային կենտրոն:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդարանի պատվիրակությունը՝ առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանի եւ օրվա կապակցությամբ հատուկ Բաթումի ժամանած «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի տնօրեն Արմեն Հակոբյանը, հոգեւոր խորհրդական Պարույր քին. Ավետիսյանը, Բաթումիի համայնքային գործիչներ, մտավորականներ, հայ հասարակայնության ներկայացուցիչներ:

Կենտրոնի բացումն իրենց ներկայությամբ պատվել էին Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը, Աջարիայի, Գուրիայի եւ Իմերեթիի ՀՀ գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը, պաշտոնական այլ անձինք:

Կենտրոնի շենքը ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության կառավարության, մասնավորապես Սփյուռքի նախարարության նյութական աջակցությամբ: Վերանորոգման աշխատանքները կատարվել են «Ջինիշյան» հիմնադրամի հովանավորությամբ, իսկ ներքին հարդարումը եւ գույքը ձեռք են բերվել Վիրահայոց թեմի առաջնորդարանի եւ Սբ Փրկիչ եկեղեցու ծխական համայնքի միջոցներով:

Ալեքսանդր Մանթաշովի անվան կենտրոն Բաթումիում



Արարողությունը բացեց Վիրահայոց թեմի՝ Աջարիայի, Գուրիայի եւ Իմերեթիի հոգեւոր հովիվ Արարատ քին. Գումբալյանը: Կենտրոնի բացման կապակցությամբ Բաթումիի հայ համայնքի ներկայացուցիչներին շնորհավորեցին Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանը, «Ջինիշյան» հիմնադրամի տնօրենը: Բանախոսները կարեւորեցին մետրոպոլիտառ հայերենի պահպանման, ազգային մշակույթի զարգացման, հայի ինքնության փոխանցման, հայ-վրացական բարեկամության խորացման առաքելությանը նպատակաուղղված կենտրոնի գործունեությունը: Երախ-

տագիտության խոսքեր ինչեցին ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի իշխանությունների հասցեին՝ Վիրահայոց թեմի հոգեւոր եւ կրթամշակութային գործունեությանն աջակցելու համար:

Կենտրոնի ժապավենը կտրելուց եւ պատի ցուցատախտակը բացելուց հետո Վիրահայոց թեմի առաջնորդի հանդիսապետությամբ կատարվեց տնօրինքի արարողություն:

Նորաստեղծ կենտրոնի տնօրեն Սոնա Հովհաննիսյանը հյուրերին ներկայացրեց ընդամենը մի քանի ամիս առաջ ձեւավորված «Ալեքսանդր Մանթաշով» կենտրոնի աշխատանքները, որ-



տեղ գործում են «Սբ Գրիգոր Լուսավորիչ» նախակրթարանը՝ իր 33 հայ մանուկով, «Մեսրոպ Մաշտոց» հայերենի ուսուցման մեկօրյա դպրոցը՝ 2 դասարանով եւ 50-ից ավելի աշակերտով, «Մեր ապագան» երիտասարդական միությունը, «Աղբյուր» երգի, «Հեղնար» պարի, ասմունքի եւ դրամատիկական խմբակները, Էլեկտրոնային լրատվամիջոցը, հոգեբանական դասընթացները եւ այլն: Ցուցադրվեցին կենտրոնի շենքի ստեղծման գործընթացը պատկերող սլայդներ եւ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի՝ կենտրոնի աշխատակազմին եւ Բաթումիի հայ համայնքին ուղղված շնորհավո-

րանքի եւ բարեմաղթությունների տեսագրությունը:

Կենտրոնի սաների ուժերով եւ ուսուցիչների ջանքերով ներկայացված գրական-երաժշտական մոնտաժը դարձավ ազգային շնչով եւ հայեցի դաստիարակությամբ տոգորված կենտրոնի գործունեության առիավատչյան:

Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի տնօրեն եւ «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Զիդիկյանը կենտրոնին փոխանցեց ՀՀ Սփյուռքի նախարարության նվերը, իսկ «Հայարտուն» կողմից՝ թերթիսահայ մանրանկարիչներ Գոհար Հակոբյանի եւ Մերուժան Շահումյանի աշխատանքները:

Առաջնորդարան Վիրահայոց թեմի

ՀՈՎՀԱՆՆԵՆ ԵՐԱԶ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Մկիգրը՝ թիվ 19-22

Ստորել երկայացում ելք բանաստեղծի մահից հետո հղային հանձնված այդ գրքերի վրա Մանիկի խոսուն մակագրությունները, որոնք ինքնին հասկանալի են եւ առանձնապես մեկնաբանության կարիք չունեն։

1977 թ. լույս տեսած «Յոթնապատում» քառյակների գրքի առաջին էջում հեղինակի անվան վրա Մ. Կարապետյանը հավելել է . «Յ. ԾԻՐԱԶ-ի քրոջից՝ Մանիկից, Իդային՝ Շիրազի Աստվածուհուն»։

Երկրորդ էջում կարդում ենք.

«Սիրելի Իդա,

Ներող եղեք, որ եղբորս մահից անմիջապես հետո չկարողացա կատարել նրա խնդրանքը՝ ձեզ նվիրել նրա աշխարհաճանաչ գրքերը։ Վիշտու ու անհամարձակությունս եղան պատճառները։

Նրա յուրաքանչյուր սիրո երգի մեջ կտեսնեք ձեզ՝ բանաստեղծի մեծ սերը։

Մանիկ»։

«Քնար Յայաստանի» երրորդ գրքի (1974) առաջին էջում նույն ձեռքով մակագրված է. «ՅՈՎՀԱՆՆԵՆ ԾԻՐԱԶ-ի քրոջից՝ Մանիկից, եղբորս սիրո Աստվածուհուն՝ Իդային»։

Իսկ 1984 թ. երկերի քառասունորրորդ երկրորդ հատորի (պոեմներ) առաջին էջում հետեւյալ մակագրությունն է.

«ՅՈՎՀԱՆՆԵՆ ԾԻՐԱԶ-ի քրոջից՝ Մանիկից,

եղբորս Աստվածուհուն՝ Իդային՝ առողջ ու առույգ ապրելու մաղթանքներով։

Տարիների մեջ եղբայրս քայլեց ձեր աչքերի հետ եւ ձեր աչքերը փնտրելով։

Նրա ցանկությամբ ձեզ եմ նվիրում այս գրքերը։

Մանիկ»։

Մ. Կարապետյանը շատ լավ գիտեր իր բանաստեղծ եղբոր՝ Շիրազի կյանքի բոլոր գաղտնիքները՝ ամենայն մանրամասնությամբ։ Նրա այս մակագրությունները եւս հավաստում են, որ Իդայի՝ իր «սիրո աստվածուհուն» հանդեպ բանաստեղծի սերը ե-

ղել է մոլեգին ու տեւական։ Դա կհավաստվի նաեւ տասնյակ բանաստեղծությունների ու պոեմների, ինչպես եւ նորահայտ մի քանի նյութերի ստորել կատարվելիք քննությամբ։

Ակնարկվող նյութերը, որ հոժարակամ մեզ է տրամադրել Իդայի դուստր Մարիկա Տոնյանը, նույնպես կարելու են, որովհետեւ նրանցով բացահայտվում ու ճշգրտվում են բանաստեղծի եւ Իդայի թարգմանչական համագործակցության հետ կապված հետաքրքիր մանրամասներ։

Այսպես՝ բանաստեղծ Շիրազը եւ Իդան, նախքան վերջինիս ամուսնանալը, եղել են այնքան մտերիմ, որ, ինչպես ստորել հրապարակվող նամակում է նշվում, «միասին են հյուսել իրենց երազը»։ Ռուսերենի կատարյալ իմացությամբ Իդան օգնել է Յովի. Շիրազին ռուս մեծ բանաստեղծ Մ. Յու. Լերմոնտովի երկու՝ «Կալաշնիկովի երգը» եւ «Դեւը» պոեմները թարգմանելիս, եւ Շիրազը բացարձակորեն վստահել է նրան։ Այդ է հաստատում Իդային հասցեագրված «1947 թ. Նոյեմբեր» թվակիր հետեւյալ նամակը, որից պարզվում է նաեւ, որ նախապես բանաստեղծը թարգմանել է «Կալաշնիկովի երգը» նույն Իդայի կատարած տողացից, հետո խնդրել է նրա իսկ խոստացած «Դեւի» տողացի թարգմանությունը։

Յովանաբար՝ երկուսով միասին են քննարկել Լերմոնտովի չափածո եւ արձակ ստեղծագործություններ, եւ նրանց ընտրությունը կանգ է առել հիշյալ պոեմների վրա, եւ միասին էլ վճռել են դրանք հայ ընթերցողին թարգմանաբար ներկայացնելու անհրաժեշտությունը։

Ահա այդ նամակը բառացի.

«Շնկեր Իդա,

Ահա ուղարկում եմ անմահ «Կալաշնիկովի երգը», որ թարգմանել եմ մեծ սրտով. կնշանակե հնարավոր էին սխալները, մանավանդ որ իբրեւ ռուսալեզվագետ ես դեռ միևնույն օրս օրոցքի մանուկ եմ... Կուզենայի՞ր, որ իմ գրական թշնամիները ժանիք չունենային այս իմ պոեմի նկատմամբ - եթե այդ ուրեմն կխնդրեի մեծ մտքով վերացնելիք վրիպումներս...



Գործ՝ Ա. Կարապետյանի

Յովհաննես Շիրազ

Յ. Գր.

Միաժամանակ կուզենայի խնդրել, որ տողացի թարգմանությունը կատարելիք «Դեմոնի» (եղավ կատարյալ ռուսերեն...), քանի որ մի ժամանակ խոստացել էիք՝ երբ դեռ մեր աչքերը՝ իրար վրա՝ կույր էին։ Բայց ես կարծում եմ՝ չի խանգարի՝ հանուն հայ գրականության մի հետին մշակի...

Նույնը։

Ինչպես ասում են, մնացածը՝ բազմակետերում։

Յայտնի է, որ «Կալաշնիկովի երգի» շիրազյան ամբողջական թարգմանությունը տպագրված է նրա երկերի 1954 թ. ժողովածուում եւ Լերմոնտովի երկերի հայերեն ժողովածուի առաջին հատորում (տե՛ս Լերմոնտով Մ. Յու., Նստիր երկեր, հ. 1, «Սովետական գրող» հրատ., Եր., 1982, էջ 162-179)։ Բայց ահա հաջորդ նամակից պարզ է դառնում, որ «Դեւի» թարգմանությունը, որով հատկապես ոգեւորված էր Շիրազը եւ նրան մեծ կարեւորություն էր

տալիս, չի ամբողջացել եւ գուցե այդ պատճառով էլ չի տպագրվել։ Իդան բանաստեղծին «Դեւի» տողացի թարգմանությունը տվել է մաս-մաս, հավանաբար՝ ոչ ամբողջությամբ։ Ըստ այս նամակի տվյալների՝ գոնե հատվածների թարգմանություն ստույգ կատարվել է։ Մնացածը կպարզի բանաստեղծի ձեռագրերի ուսումնասիրությունը։

Այս նամակում, սակայն, մեզ առավել հետաքրքրողն ակնարկվող ստեղծագործական այն բուռն ոգեւորությունն է, որ 1947 թ. աշնանն ապրել է բանաստեղծը Լերմոնտովի «Դեւը» թարգմանելիս եւ Դեւի երդումով Իդային իր սերը խոստովանելիս։ Նամակը հավաստում է, որ «Դեւի» թարգմանությունը եղել է այդ երկուսի «միասնական երազը վախճանականի ափերը հասցնելու» հստակ ծրագիր.

«Իդա՛,


Ահա Դեւի երդումը՝ քեզ. ոչ թե թարգմանեցի, այլ սրտաբաց երդվեցի, ուզում ես՝ հավատա՛ր, չես ուզում՝ հավատա՛ր, այս հոգեթափ երդումն է՝ քեզ...

Նայիր՝ եթե սխալ կամ ուղղելի բաներ կգտնես՝ մի այլ թղթի վրա ցո՛ւյց տուր... Թարգմանությունս այնպես է լինելու, որ ոչ թե հիմա, այլ հարյուր տարի էլ հետո որ Լերմոնտովը ելի՞ր՝ կարդա՛ր շնչա իմ հոգու ականջին՝

«- Դու ոչ թե թարգմանել, այլ գրե՛լ ես նույն սրտով ու նույն ձեռքով, ինչով որ ես էի գրել, որով հետո՞՞ դու ես՝ ինչպես ես՝ շնչացել ես սիրո մասին ու մռնչացել քո՛ սերը, քո չհասկացված երազը. եւ իմ եւ Լերմոնտովի անմահ հոգիները կհամբուրվեն այն ժամանակները եւս, եւ ոչ մի պովետ չպիտի համարձակվի մոտենալ «Դեւին»՝ թարգմանելու մտքով...

Բայց այս ամենը թողնենք սերունդներին եւ անցնենք մեր գործին, այսինքն՝ շտապ ուղարկիր նյութերը, որ գրե՛մ, այսինքն՝ որ մեր երազը հասցնեմ վախճանականի ափերը...

Շարունակությունը՝ էջ 5



Մկիգրը՝ էջ 3

Անշուշտ կային ըմբոստության կոչեր, կային անհնազանդ անհատներ, կային խմբակներ, որ առաջին օրեն դիմադրելու մտածումն ունեցան, սակայն ատոնք բոլորը չնչին փոքրամասնությունն էր միայն կկազմեին եւ պատասխանատու անհատներ չէին։ Վտանգը համահայկական էր, ու այդ վտանգին դեմ՝ հայության հավաքականությունը, վերից վար, խոհեմության եւ զգուշության քաղաքականությունը կվարեր եւ թուրք պետության սահմաններում մեջ հավատարիմ քաղաքացիի պարտականությունները կկա-

տարեր ծայրահեղ գոհողություններով։

Սակայն 1915 թ. հայոց Մեծ եղեռնի ընթացքում արեւմտահայության մի հատվածն այնուամենայնիվ ընդվզեց թուրք ցեղապանների դեմ՝ նրանց հակադրելով իր դարավոր դիմադրական ոգին, ընտրելով գիտակցված մահը, ինքնապաշտպանական դուրսգալամարտ մղեց անարգ թշնամու դեմ՝ Տարոն աշխարհից, Մուշից, Խնուսից ու Սասունից մինչեւ Վան, Մուսա լեռից մինչեւ Ուրֆա, Տրապիզոն, Պոնտոս ու Շապին Գարահիսար։ Դրանք հայոց դուրսգալնությունն էր եւ չէր էին, գիտակցված ընտրու-



թյուն՝ պատվավոր մահվան եւ տարագրության ճանապարհներին ոչնչացման միջեւ։

Յաճախ հարց է ծագում. ինչպե՛ս եղավ, որ 1915 թ. հայկական որոշ շրջաններ ինքնապաշտպանության դրոշ պարզեցին եւ գիտակցված մահվան գնացին, իսկ այլ շրջաններ անձատուր եղան թուրքական յաթաղանին։ Ինչո՞ւ հնարավոր չէր լավ համակարգել դրանք եւ փոխօգնության կապ հաստատել ինքնապաշտպանության դիմած տարբեր շրջանների միջեւ։ Փաստորեն՝ 1915 թ. արեւմտահայությունը չունեւ ինքնապաշտպանության կամ ապստամբության ինքնուրույն ծրագիր։ Կազմակերպական թերությունների պատճառը հենց ինքնապաշտպանության ինքնաբերական բնույթն էր։ Ակնհայտ է, որ հայերն ինքնապաշտպանության են դիմել՝ մեծ մասամբ հապճեպ արձագանքելով իրադարձություններին, եւ նրանց գործողությունները թելադրված են եղել իրադրության սրությամբ։ Այս ցավալի իրողությունը միաժամանակ ապացուցում է հայերի հասցեին թուրքական պաշտոնական քարոզչությամբ տարածվող այն մե-

ղադրանքի անհիմն լինելը, թե իբր հայերն «անհուսալի տարր էին՝ խռովարար, ապստամբ, թիկունքից հարված հասցնելու ընդունակ»։ Եթե այդ մեղադրանքը համապատասխաներ իրականությանը, նախ՝ հայերի ինքնապաշտպանությունը կլիներ ոչ թե օջախային, այլ՝ զանգվածային, երկրորդ՝ այն ավելի մեծ թվով դեպքերում հաջող ելք կունենար եւ չէր ավարտվի մե՛կ քաջամարտիկների եղեռնական կոտորածով, մե՛կ էլ՝ հերոսական ինքնապաշտպանությամբ, ինչով ավարտվեցին, օրինակ, Շապին Գարահիսարի եւ Ուրֆայի հերոսամարտերը։ Եվ երրորդ՝ եթե Օսմանյան կայսրության հայ բնակչությունը պատրաստ լիներ եւ մտադրություն ունենար «թիկունքից հարված հասցնելու», ապա զենքի եւ պարտիզանական պայքարի մարտավարության հիմունքներին տիրապետող տղամարդկանց պակաս, ցավոք, չէր զգացվի, եւ թուրքական կառավարությունն էլ այդքան հեշտությամբ չէր կարողանա եղած առաջնորդներին մի հրամանով հավաքել, աքսորել կամ կոտորել՝ չհանդիպելով ոչ մի դիմադրության։ Յա-

յերի ինքնապաշտպանության պատմությունը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ հայերը մնացել են առանց առաջնորդի, որտեղ չեն եղել պայքարի կոչող եւ պայքար կազմակերպող անհատներ (ցավոք, մեծ մասամբ այդպես է եղել), բնակչությունը կոտորվել է գրեթե առանց դիմադրության։

Ռազմական առումով, ցավոք, հերոսամարտերի մի զգալի մասն ավարտվեց պարտությամբ, որը, սակայն, երբեք չնստեցրեց նրանց հերոսականությունն ու պատմական նշանակությունը։ Այդ մասին իրադարձությունների մոտ կանգնած հայ նշանավոր պատմաբան Ա. Դոնը (Յովհաննես Տեր-Մարտիրոսյան) գրում է. «Մանկայն եղան գյուղեր, գտնվեցին շրջաններ, որոնք լուռ գլուխ չձեռնեցին դահձի առաջ, որոնք բողոքեցին, ըմբոստացան եւ փարելով գնեցին՝ դիմադրեցին տաճկական յաթաղանին։ Ծիշտ է՝ կոթվեց անհամապարհ եր, ուժեղը՝ անհամապատասխան, եւ շատերը՝ զենք վերցնողներից, նույնպես ընկան, բայց քաջաբար, ընկան՝ հարվածելով թշնամուն, ընկան՝ փրկելով ցեղի անունը, դրա հետ նաեւ՝ նրա գոյությունը»։

Շարունակելի

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մկիզբը՝ թիվ 18-21

Հանգիստ Սեւակն անդրադարձել է նաև այլ առիթներով: «Հանուն եւ ընդդէմ «ռեալիզմի և խափնիքների» (1965) ծրագրային ելույթում խոսելով «մենաձայնության», «խաղիկ-ջանգլուկության», «ֆուլկլորային մտածողության», «պատմողական-նկարագրական պոեզիայի» հոգեզանգի տողաշարքի, հարթության ու հարթագրության դեմ եւ պաշտպանելով համանվագայնության-բազմաձայնության, դիստանսի, թելադրական-հուշարարական պոեզիայի, կետ զծի, փվածքների սկզբունքները, դնելով ոգու հայտնությունը, հոգեկան ներանձնավային լաբիրինթոսներում ապրող «մտածող-մտավորական-իմացականության» լեզուն» հերոսի ու մարդագրության հարցը՝ հանգի պահանջը դիտարկում է այս տեսադաշտում:

Նախ՝ նրա դիտարկում է և նորագույն երիտասարդական պոեզիան, ինչի կապակցությամբ գրում է. «Հոգեւոր երեկվա հանգավոր ու չափավոր կաղապարվածությունից, քափի ու փրփուրի չափաբերականից, գանգրահեր բառերի վաճառականությունից, սրանք հաճախ գրում են մի այնպիսի լեզվով, ասես հարկադրաբար հարկ ու տուրք են տալիս՝ իրենց մտքերն արտահայտելով մի կերպ, գոռով, կարծես թե օտար մի լեզվով: Նրանք «նկարում են եզրիպատաբար»՝ մոռանալով, որ եզրիպատաբար, կրկնում են, այդպես էին նկարում, որովհետեւ ավելի լավ չէին կարող, մինչդեռ ժամանակակից բանաստեղծը երեկվա նման չի գրում (օրինակի համար՝ չի հանգավորում) ոչ թե այն պատճառով, որ հանգավորել չգիտի (նա պիտի իմանա շատ ավելի, քան իր նախորդներից որեւէ մեկը), այլ այն պատճառով միայն, որ չունի այդ հանգավորման կարիքը (եթե, իհարկե, չունի): Ուստի եւ անհանգ, ազատ ոտանավորով, անչափ-անկշռայն գրելը արդի բանաստեղծության արտաքին հայտանիշներն են եւ ոչ թե ներքին հատկանիշները: <...>: Ուրեմն արդիական բանաստեղծ լինելը հավասարազոր է ոչ թե հավկուրու-

թյան, այլ ներքնատեսության» (ԵԺ, V, 257-258):

Այստեղից նա անցնում է արդիական բանաստեղծության իր ըմբռնումների բացահայտմանը եւ մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ շարունակում. «Ով էլումուտ չունի ոգու ոլորտներում, ով չի հաղորդակցվում հոգեկան ներանձնավային լաբիրինթոսներին, նա, իմ բարի խորհրդով, իզուր է հրաժարվում հանգից ու վանկից, իզուր է դիմում սպիտակ ու ազատ ոտանավորին, որանից նա պիտի վնասվի միայն, ավելին՝ ունեցածն էլ կորցնի: Իսկ ով հանդգնել ու վճռել է այդ անել, թող բարի լինի անվանակոչելու մեր հոգեկան խլրտումները, որ եւ ջանում է անել արդի համաշխարհային պոեզիան» (ԵԺ, V, 261): Հանգանակային հաջորդականությամբ նա բարձրաձայնում է. «Ով կարծում է, թե անհանգ բանաստեղծություն գրելն առավել դժվար չէ՞, քան հանգավորը, նա տակավին չի գրել ոչ մի բանաստեղծություն: Ոչ միայն անհանգ, այլեւ առանց չափի գրելու համար տաղանդ ունենալն էլ քիչ է. պետք է ունենալ հզոր տաղանդ» (ԵԺ, V, 266): Չուզահեռ դարձյալ մտաբերվում են Գարեգինի կամակի տողերը:

Երիտասարդ բանաստեղծներին նվիրված «Դժվարը իրենից հասուն լինել է...» (1969) գեկուցման մեջ Սեւակը նույն հարցերի կապակցությամբ շարունակում է. «Մեր երիտասարդների միայն մի մասն է գրում հանգավոր: Անձնապես ես բանաստեղծության պարտադիր հատկանիշ չեմ համարում հանգը: Դա ոչ թե սեռի տեսակարարն է, ինչպիսին է, դիցուք, կնոջ կուրծքը, այլ սեռի տեսքարարն է, ինչպիսին է, դիցուք, շրջագետքը: Շրջագետքի փոխարեն անդրավարտիք հագած կինը դարձյալ կին է մնում: Եվ մեր շատ տաղանդավոր հանգայինների համար հանգը այլ բան չէ, քան կանացի շրջագետք՝ ոչ կնոջ հագին: Այլ համեմատությամբ ասած՝ հանգը

ՀԱՆԳԻ



նրանց համար նույնն է, ինչ հեռակը կամ անթացույցը. խլեցեք նրանից դա, եւ այլեւս չեն կարող ընթանալ, որովհետեւ ծնվել են խելանդամ: Իսկ երիտասարդության մեծամասնությունը գրում է ոչ միայն առանց հանգի, այլ նաեւ առանց կշռայթի ու չափի: <...>: Սակայն էլ ի՞նչ չափած, եթե դա գրված է ոչ միայն հանգից, այլեւ չափից: Չափած... առանց չափի: Այսինքն՝ նկար... առանց գույնի, երգ... առանց ձայնի: Այստեղից էլ ձեռք այն քայքայումը, որ շնչում է մոտայուտ աղետի ձեռով: <...>: Ուրեմն այսպես՝ ոչ հանգ ու վանկ, ոչ կշռայթ ու չափ, ոչ մարմին-օրգանիզմ: <...>: Այո, բանաստեղծություն գրելը հիմա շատ է հեշտացել...» (ԵԺ, V, 341-342):

Շարունակելով մտքերը «բանաստեղծական անբանաստեղծության» մասին՝ «Ինչ-ը, ինչ-պես-ը եւ որպես-ը» (1970) հարցազրույցում Սեւակը շարունակում է. «Իմ կրտսեր գրչակիցների հետ խոսելու համար ես ուզում եմ մի քիչ ետ գնալ եւ հիշեցնել իմ նույն հոգեվաճի լիտսըը «Հանուն եւ ընդդէմ...»-ի մասին

էլ այն մասերը, որ վերաբերում են բանաստեղծության հանգ ու վանկին, չափ ու կշռայթին: Ես գրել եմ, որ բանաստեղծության համար բնավ էլ սեռային հատկանիշներ չեն հանգավորումը եւ չափը: Բայց միաժամանակ խորհող եմ տվել <...>, որ անհանգ գրելը ավելի դժվար բան է, քան հանգավորելը, որ դա ենթադրում է ավելի մեծ շնորհք ու տաղանդ: Եվ միաժամանակ ես ավելացրել եմ, որ առանց չափի գրելու համար բավական չէ նույնիսկ մեծատաղանդ լինելը, հարկավոր է հզոր տաղանդ: Սովորական տափակ խոսքով ասած՝ առանց հանգի եւ առանց չափի կարող է խոսել գետը, բայց ոչ երբեք փոքրիկ վտակը, որի ջուրը օգտագործելու համար պետք է վտակից առու սարքել, այսինքն՝ բառի օգնությամբ փորել իրեն եւ եղած սակավ ջուրը հասցնել մարդի կամ ծառի, որ տվյալ դեպքում ընթերցողն է: <...>: Արանով արդյոք ես դեմ եմ բանաստեղծության անչափ-անկշռայնությանը: Ոչ երբեք: Անկեղծ ասած՝ ես ունեմ մի երազանք, որ երեւի չի էլ կատարվելու՝ գրել բանաստեղծու-

թյունների մի գիրք առանց չափ ու կշռայթի, ինչպես Աստվածաշնչի հանձարեղ բանաստեղծները՝ Սողոմոնը, Դավիթը, կամ ինչպես Ռիտմենը: Բայց կամենալը այլ բան է, եւ կարենալը՝ բոլորովին այլ» (ԵԺ, V, 405-406): Վերջին արտահայտությունը վերստին հիշեցնում է Գարեգինի եւ մղում խորհելու նրանց ներքին ինքնազնադատության զարմալի համեստության մասին:

«Եվ իմ գլխավոր հանդիմանանքը ոչ թե ձեռի արտահայտությանն է, այլ ասելիքի պակասին: Թող գրեն անհանգ, թող գրեն առանց չափի եւ առանց կշռայթի, թող գրեն առանց մեծատաղանդի եւ առանց կենսադրության, ում խելքին ինչ բրթում է [պետք է լինի բրթում], միայն մեկ պայմանով, թող բան ասեն, այդ բանը լինի թարմ եւ չլինի չնչին» (ԵԺ, V, 406):

Անդրադարձներ կան նաեւ այլ առիթներով. 1963-ին Եմիկ կապակցությամբ Սեւակն ավելացնում է. «Նախ՝ Եմիկն իր կյանքում առաջին անգամ է գրել անհանգ բանաստեղծություն: Ապա՝ դարձյալ առաջին անգամ, մինչեւիսկ չի պահպանել չափ-կշռայթը՝ ստեղծելով ոչ միայն սպիտակ, այլեւ ազատ ոտանավոր: Սրանք բանաստեղծության արտաքին տարբերակիչներն են, որոնք սակայն պայմանավորված են ներքին դրդապատճառներով: Իսկ այդ դրդապատճառներն այլ բան չեն, քան գիտակցումը այն անհրաժեշտության, որ պիտի մագլցել ներքին բարձրություններ» (ԵԺ, V, 224-225):

Անդրադարձներն անպակաս են նաեւ չափածո երկերում: «Իմ կտակը» շարքի 9-րդ բանաստեղծության մեջ (1959) գրում է. «Եթե ուզում ես հասկանալ դու ինձ՝ // Ներս մտիդ անտառ եւ ականջ արա: // Որքան ձայներ կան՝ բոլոր՝ բոլոր տարբեր» (ԵԺ, VI, 93): Ահա այս անտառում հեղու, բայց չնկատված տարբեր ձայներն էր նա կոչ անում բերել պոեզիա եւ որպես հանգ, եւ որպես ձայնակարգություն-հնչյունաբանություն: Այստեղից՝ «Առանց հանգերի, բայց սրտի չափով» (1959) պատգամը:

Շարունակությունը՝ էջ 6

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱԶ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Մկիզբը՝ էջ 4

Երվով եմ, Իդա՛, իմ թարգմանական գործի հուրերով, որ **ԵՍ ԵՄ ԵՐՈՎՈՒՄ, Ո՛Ք ԹԵ ԴԵՆԸ**, երվով եմ, ինչպես կերվի արեւը լուսաբացներին՝ մուրը ցրելու...

Բայց այս շատ եղավ» (ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Ըստ երեւոյթին՝ բանաստեղծի եւ նրա նոր «սիրո աստվածուհու» միջեւ տեղի է ունեցել լուրջ ընդհարում՝ անխուսափելի խզման տխուր հետեւանքներով: Հովհ. Շիրազի մի «խայթող նամակ», որի մասին ակնարկ կա բանաստեղծի՝ ստորեւ ներկայացվող նամակում, շատ է վշտացրած եղել Իդային, կոտրել նրա սիրտը, եւ դա ինչ-որ ճանապարհով հայտնի է դարձել բանաստեղծին, որն իր «մեղքը քավելու» անհրաժեշտություն է զգացել:

Հովհ. Շիրազը, սովորության համաձայն, իր հազարավոր նամակները գրել է երկու օրինակից. նույն նամակի մեկ օրինակն ուղարկել է հասցեատիրոջը, մյուսը՝ պահել: Իդայի հանդեպ բանաստեղծի սե-



րը եղել է այնքան ազնիվ ու մոլեգին, որ ինչ-որ պահի ազդեցությամբ գրված նամակում տեսնելով «սիրո աստվածուհուն» դառնացնող արտահայտություններ՝ իրեն է մեղավոր համարել, այդտեղ է իր մոտ պահված նամակն էլ, Իդային ձուլված «շատ» բանաստեղծություններ էլ (քանի՞սը եւ ի՞նչ՝ չգիտենք): Իդայի ստացած նամակի մասին եւս տեղեկություն չունենք: Եթե այն չի պահպանվել Մ. Տոկյանի՝ Իդային առնչվող թղթերում, կարելի է են-

թադրել, որ այն նույնպես այրվել է կամ ոչնչացվել: Այսպես մտածելու հիմք տալիս է նամակների զուգահեռ գրված հետեւյալ բանաստեղծությունը.

Երազիս մեջ այրում էիր
Նամակներս քեզ գրած,
Ա՛խ, նրանց մեջ՝ թե բանայիր՝
Իմ սիրտը կար, ի՛մ սիրած:

Երազիս մեջ կարդում էիր
Դու մի նամակն ուրիշի,
Կրծքիդ սեղմում, ծովը սուզվում
Ձո նոր սիրո մշուշի:

Երազիս մեջ գնում էիր
Դուք ձեռ սիրո աստղի տակ,
Ընկած էի ես ձեր ճամփին՝
Որպես այրած մի նամակ:
(էջ 129 - 130)

Բանաստեղծի՝ ստորեւ ներկայացվող մյուս նամակը տալիս է շիրազյան մեղավորության գիտակցության եւ քավելու պատրաստակամության, նրանց գծու-

թյան եւ սահմանաբաժանի մասին միայն կռահելու հնարավորություններ.

«Իդա՛,

Այն նամակը, որով խայթվել էիր, այդտեղ եմ: Այդեղի եւ շատ բանաստեղծություններ՝ քո մասին գրված (ոչ նամակի բովանդակությամբ, այլ ի սրտե):

Դու ինձ չես ճակատագրված: Ոչ թե լավը՝ լավին, այլ կյանքում ուրիշ է՝ վատը՝ լավին կամ լավը՝ վատին.

Չոր փայտն ու փայտը նամեն՝ (թաց)
Լավ եւ վառվում իրար հետ...

Բայց որպեսզի քավեմ՝ գրեցի հետեւյալ երգիկական. դու պահիր այն, չկորցնեմ՝ ինձ «կորցնելուց» հետո...

Ձո վշտահար եղբայր՝

Հովհաննես Շիրազ» (ընդգծ. բնագրում են - Ս. Մ.):

Շարունակելի

Սամվել ՍՈՒՐԱԳՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկիզբը՝ թիվ 22

Իսկ ի՞նչ են մոլորաբանները՝ պերիպլուսներն ու խոխերաբանները։ Պերիպլուսը հին հունաստանում ծովային ափամերձ շրջանների վերաբերյալ ստեղծագործություն է, որը սովորաբար կա՛մ ճանապարհորդության պարզունակ նկարագրություն է, կա՛մ էլ ծովագնացի գործնական ուղեցույց, որտեղ մատնացույց են արվում ուղիների առանձնահատկություններն ու վտանգները, հարմարավետ նավահանգիստները, կայանատեղիների միջև մոտավոր հեռավորությունները։



Պողոմենոս (ուսմիցնադարյան դիմանկար)

Պերիպլուսների հոմեական տեսակն էլ խոխերաբաններն են, որոնք արտահայտում են հոմեական կայսրության առանձնահատկությունները, քանի որ ներկայացնում են ոչ միայն ծովային, այլև ցամաքային առևտրի եւ ռազմաքաղաքական կարեւորագույն ուղիների կայանների նկարագրությունը։ Մեզ ամենից ծանոթ օրինակը Պետրոսյան քարտեզն է (5-րդ դ. սկիզբ)։

Ցավոք, պերիպլուսների ու խոխերաբանների զգալի մասը մեզ չի հասել, իսկ մեզ հասած օրինակներն էլ ցույց են տալիս, որ կայանների միջև նշված հեռավորությունները մեծ մասամբ կամայական են։ Հենց այս պատճառով են Ս. Երեմյանը եւ այս հարցում նրան հետևող Բ. Հարությունյանը կարծել, որ Պողոմենոսի համար արդյուրագիտական հիմք հանդիսացող մոլորաբանները չեն ապահովում անհրաժեշտ քարտեզագրական ճշգրտություն։

Ի գիտություն ընդունելով այս ենթադրության ճշմարտացիությունը՝ այնուհանդերձ պետք է ուշադրություն դարձնել Պողոմենոսի կողմից ներկայացված ծովային ափամերձ շրջանակներում որպես 0° միջօրեական է դիտարկվել ոչ թե այն ժամանակ «անհայտ» Գրինվիչը, այլ Օրինյալ կղզեխումբը։ Վերջինիս տեղագրության մասին կան բազմաթիվ ենթադրություններ, որոնց հիմնական մասը հանգում է Աֆրիկայի ատլանտյան ափին մոտ՝ ներկայումս Իսպանիայի կազմում գտնվող Կանարյան կղզիներին։ Նման պարագայում անհրաժեշտ է դիտարկել կղզեխումբի ծայր արեւմուտքով անցնող 18° միջօրեականը՝ որպես հաշվարկային հնարավոր հիմք։ Զանի որ Կանարյան կղզիները (ամենաարեւմտյանը՝

Էլ Գիերո կղզին) գտնվում են գրոյական միջօրեականից արեւմուտք, ուստի աշխարհագրական յուրաքանչյուր օբյեկտի պտղոմեոսյան կոորդինատներից անհրաժեշտ է հանել 18°, որպեսզի երեւա, թե ստացված կոորդինատներն արդյոք համապատասխանում են իրական կոորդինատներին։

Նախահաշվարկային զուգահեռականի հարցում Պողոմենոսն իր հաշվարկների հիմքում ունեցել է Մարինոս Տյուրոսցու՝ մոտ 100 թ. կատարած ուսումնասիրությամբ ներկայացված տվյալներից միայն հոռոտ կղզու կոորդինատները (մոտ 36°)՝ մնացածը համարելով իրական տարածություններն աղճատող։ Նման պատկերացումները ցույց են տալիս, որ Պողոմենոսը հասարակածը ոչ ճիշտ զուգահեռականի դիրքում է պատկերացրել, այսինքն՝ չի հիմնացել իրական գրոյական զուգահեռականի դիրքը։

Աշխարհագրական կոորդինատների տարբերակված արտահայտությունները եւ վերը նշված անհամապատասխանությունները հրապարակ են նետում այն հարցը, որ Պողոմենոսի աշխատանքում կան քարտեզագրական պրոյեկցիայի ուղղակի առանձնահատկություններ։ Իսկապես, Պողոմենոսն առաջ է քաշում քարտեզագրական պրոյեկցիաների այլընտրանքային 2 համակարգ, որոնք նպատակ ունեին առավել ճշգրտելու իր աշխատանքը։

Պողոմենոսի նպատակն է եղել ներդնել գլոբուսի ստեղծման համար անհրաժեշտ պրոյեկցիա։ Այստեղ եւս գործ ունենց «ուղղորդիչ» 3 զուգահեռականների հետ՝ հս. լ. 63°, հս. լ. 23°30' եւ հվ. լ. 16°15'։ Սա, ըստ էության, շատ լուրջ քայլ էր քարտեզագրության ասպարեզում, քանի որ սրանով եւս մեկ քայլ էր կատարվում կոնի հատույթի ճշգրտությամբ քարտեզագրական պրոյեկցիայի ստեղծման ուղղությամբ։

Որքան էլ Պողոմենոսի «Աշխարհագրություն» երկասիրության մեջ առաջընթաց քայլեր ենք արձանագրում քարտեզագրության զարգացման բնագավառում, այնուհանդերձ պարտավոր ենք նկատել մի քանի կարեւոր հանգամանք։

1. Պողոմենոսի պատկերացմամբ Երկիրն ավելի փոքր է, քան իրականում։ Այստեղ հասարակածը հաշվված է շուրջ 33 300 կմ՝ իրական 40 076 կմ-ի փոխարեն։

2. Աշխարհագրական երկայնությունների քանակը Օլկունմենում մեկով ավելի է։ Հստակ քանակը կարելի էր որոշել Արեգակի կամ Լուսնի՝ համաժամանակյա գրառված խավարումների միջոցով։ Նման գրառումներից միայն մեկն է հայտնի եղել Պողոմենոսին՝ Զ. ա. 331 թ. սեպտեմբերի 20-ին Արբելայում եւ Կարթագենում գրառված Լուսնի խավարումը։ Սակայն նորօրյա աստղագիտական հաշվարկները ցույց են տալիս, որ Արբելայի գրառումը սխալ է եղել, եւ Պողոմենոսը երկու բնական վայրերի միջև ժամերի տարբերությունը 2-ի փոխարեն 3 է գրանցել։ Այս սխալ հաշվարկի հիման վրա էլ նա կառուցել է ամբողջ աշխատանքը՝ թույլ տալով Միջերկրածովյան ավազանը մեկ ժամային գոտով, այսինքն՝ 15°-ով ընդարձակել։ Արդյունքում Միջերկրական ծովը 42°-ի փո-

խարեն պտղոմեոսյան հաշվարկներում դարձել է 57°։ Նույն կերպ Ասիան իրական չափերից շուրջ 50°-ով ավելի ընդարձակ է դարձել, եւ Ասիայի արեւելյան ու Եվրոպայի արեւմտյան ափերը միմյանց շատ մոտ են ստացվել։ Նման ձեռքով էլ 15-րդ դ. հրատարակվող քարտեզներում պատկերվել է աշխարհի քարտեզը, եւ նրանով ոգեշնչված՝ ծնվել են աշխարհագրական մեծ հայտնագործությունների գաղափարահիմքերը։ Այս քարտեզում փաստորեն բացակայել է Ամերիկա աշխարհամասը։ Հենց այսօրինակ քարտեզագրումներն են հիմք հանդիսացել Քրիստափոր Կոլումբոսի այն մտահղացման համար, թե Եվրոպային շատ մոտ գտնվում են Ասիայի ափերը, եւ կարելի է հեշտությամբ հասնել Ասիայի արեւելյան ափերին՝ նավարկելով Արեւմտյան Եվրոպայից դեպի արեւմուտք, հետեւապես՝ արեւելք։


3. Աշխատանքի այն հատվածները, որոնք չեն վերաբերում հոմեական կայսրությանը, պարունակում են ոչ ամբողջապես ճշգրիտ տեղեկություններ։ Այստեղ, ի վերջո, զգացվում է այն հանգամանքը, որ հեղինակը, ամենայն հավանականությամբ, չի եղել իր նկարագրած վայրերի մի մասում եւ չունի ամբողջական տեղեկություններ։

4. «Աշխարհագրության» մեզ հասած հնագույն ձեռագիրը ինքզինքն է 13-րդ դարով, ուստի երկու կարող են լինել ընդամիջարկություններ եւ հետագա խմբագրություններ, որոնք բխել են տվյալ ժամանակաշրջանի իրողություններից։

Մեր կողմից առանձնացված երկրաչափական եւ աստղագիտական դիտարկումները մեզ հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ, օրինակ, Տրապիզոն քաղաքի 43°50' կոորդինատի դեպքում գործ ունենց ոչ թե աշխարհագրական երկայնության, այլ լայնության հետ։ Տրապիզոնի աշխարհագրական իրական լայնությունը 41° է, ուստի, Պողոմենոսի հաղորդած տվյալների համեմատությամբ, տարբերությունն այնքան էլ մեծ չէ՝ 2°50', ինչը որոշ չափով տեղավորվում է Պողոմենոսի այն պատկերացումների մեջ, որ հասարակածն իրական չափերից փոքր է։

Ինչ վերաբերում է աշխարհագրական երկայնությունների եւ որանց ճշգրտման հետ սերտորեն կապված Օրինյալ կղզիների տեղորոշման խնդրին, ապա անհրաժեշտ է վերադառնալ այն տեսակետին, որ տվյալ պարագայում խոսքը, այնուամենայնիվ, Կանարյան կղզիների մասին է։ Այստեղ պետք է միմյանց հետ համադրել Միջերկրական ծովի «լայնացման» կապակցությամբ մեր ստացած աստիճանների թիվը եւ Կանարյան կղզիների աշխարհագրական երկայնությունը։ Վերջինս

ներկայացնելիս հարց է առաջանում՝ օգտագործել կղզիների արեւմտյան կամ արեւելյան ծայրամասի, թե՞ կենտրոնական մասի տվյալները։ Հետեւելով երկու տեղ գտած օրինաչափությանը՝ անհրաժեշտ է մեր հաշվարկի ժամանակ օգտագործել կղզեխումբի կենտրոնով անցնող միջօրեականը՝ 15°40'-ը, որին պետք է գումարել մինչ Մեծ Հայքի տարածքը Կանարյան կղզիներից դեպի արեւելք հանդիպող կոորդինատային անճշտությունը՝ 15°-ը, եւ ստանում ենք 30°40'։ Սա, փաստորեն, Պողոմենոսի «գրոյական միջօրեականից» Տրապիզոնի հեռավորությունն է։ Հաշվի առնելով այն, որ քաղաքի աշխարհագրական երկայնությունը, ըստ Պողոմենոսի, 70°50' է, պետք է այս թվից հանենք 30°40'-ը, որպեսզի ստանանք Տրապիզոնի հեռավորությունը գրինվիչյան միջօրեականից։ Ի վերջո, ստանում ենք 40°10' թիվը, որը գրեթե Տրապիզոնի աշխարհագրական իրական երկայնության (39°44') ցուցանիշն է՝ նշելով ընդամենը 24' անճշտությամբ։



Աշխարհի քարտեզը՝ ըստ Պողոմենոսի (ըստ Յոհաննես Ընդհերի 1482 թ. հրատարակության)

Փաստորեն՝ վերը նշված օրինակի միջոցով մենք ցույց տվեցինք, որ Կանարյան կղզիներն իսկապես Պողոմենոսի գրոյական միջօրեականն են, որ ավելի կարելի է՝ Պողոմենոսի հաղորդած աշխարհագրական կոորդինատները մտացածին չեն, այլ իրական հաշվարկների վրա են հիմնված։ Իհարկե, հենց մեր օրինակում էլ առկա էր փոքրիկ շեղում իրական կոորդինատներից, սակայն դա տվյալ ժամանակաշրջանի աստղագիտական թերի պատկերացումների արդյունք էր։

Այսպիսով, իր որոշ թերություններով հանդերձ, Պողոմենոսի «Աշխարհագրություն» երկը կարելի է անհերքելիորեն համարել աշխարհագրական պրոյեկցիայի կոորդինատները մեր մատնանշած հաշվարկային մոտեցման պարագայում զգալի հնարավորություններ են ստեղծվում հետագա ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունների համար։

Ճարտանակելի
Միջայել ՄԱԽԱՍՅԱՆ

Սկիզբը՝ էջ 5

Եվ իմ գողթնեցի պապերի նման
Ես պիտի գրեմ առանց հանգերի,
Ինչպես խոսում են մարդիկ իրար հետ,
Ու եթե չափով՝
Լոկ նրա՝ համար,
Որ սրտիս նման խոսքս էլ տրոփի։
(Եժ, V, 101)։

Մաշված բառերի մասին ասածները մի զգալի չափով վերաբերում են նաեւ հանգաբառերին՝ կարոտ-քարոտ-ին, հզոր-բոսոր-ին, արեւ-բարեւ-ին, գիշեր-հուշեր-ին, երեկ-ցերեկ-ին։

ՀԱՄԱԳԸ

Բայց խոսքերը կարծես լինեն
Վաղուց մաշված կրկնակոշիկ.
Սայթաքում են անվերջ նրանք
Եվ ինձ անվերջ գետնով տալիս։
...Անվերջ... գետնով, գետնով տալիս։
(Եժ, VI, 205-206)։

Հանգի դերն անփոխարինելի է մի շարք բնագավառներում. առաջին հերթին՝ մանկական ոտանավորների մեջ, այնուհետեւ՝ ժողովրդական ասույթների։ Հանգով գրված մանկական ոտանավորներն ավելի

հեշտ են մտապահվում, հեշտ է անգիր առնել։ Ինչպես՝ «Փիղը մտավ կրկեսը, // Բռնեց կրկեսի կեսը...»։

Այսօր էլ անգերագնացելի են թոմանյանի մանկական ստեղծագործությունները, որոնք բոլորն էլ գրված են հանգով։ Այդպես են վարվել նաեւ մնացած բոլոր մանկագիրները։ Անգամ բանը հասավ այնտեղ, որ Սահյանը Նույնպես հանգավոր խոսքով ծաղրեց այդ ամենը. «Գնում որտե՞ս երգ են կարդում մանկատանը, // Բայց երգի մեջ միայն խելքն է մանկականը»։

Անգամ Սեակը, ով փորձեց «Զեր ծանոթները» (1984) մանկական ոտանավորների գրքույկում վերանայել խորհրդանշանների ավանդական իմաստավորումը, այսինքն՝ նոր աչքով նայել ցողունը ծուռ մանուշակին, երկարական իշուկին, ագահ գայլին, ուղտին, չոչիկին եւ մյուսներին, վերստին պահպանեց ականջ չոյող հանգը. «Երգ չէր սիրում Արծիվս ինքը // Ինքն էր, իր որսն ու երկինքը», «Արագիլն եմ»-ն ամբողջությամբ խարսխված է արագիլն եմ - օրագիլն եմ - սեագիլն եմ - հեռագիլն եմ - տարագիլն եմ հանգային հնչողությանը։

Ճարտանակելի
Դավիթ ԳՍՍՄԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկզբը՝ էջ 7

Միջին հայերենում գործածվել է նաև «շնորհակալություն» ձևը, որը նշանակում է շնորհ ընդունելը, ստանալը (Ռ. Ղազարյան, 3. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 599): Ժամանակակից հայերենում էլ «շնորհակալ» բառի հոմանիշներն են «երախտագետ», «գոհ», «գոհունակ», «երախտապարտ» եւ այլն (Մ. Մուրխասյան, 3այոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2003, էջ 859): Ինչպես տեսնում ենք, լեզվի զարգացման ընթացքում այս բառի իմաստը հիմնականում պահպանվել է, սակայն արդեն ասվել է, որ հայերենում շնորհակալություն իմաստը միայն բառերով չի արտահայտվում: Դեռեւս գրաբարում գործածվում էին այդ իմաստն արտահայտող բազմաթիվ կապակցություններ, ինչպես՝

Շնորհ ունել - շնորհակալ լինել, շնորհակալություն հայտնել, գոհություն մատուցել, գոհանալ:

Շնորհ արկանել - երախտից համարել, երախտել:

Շնորհակալ լինել - գոհանալ, գոհ լինել, շնորհակալություն հայտնել:

Շնորհակալութիւն առնել - շնորհակալ լինել:

Շնորհակալութիւն ունել - շնորհակալ լինել (Ռ. Ղազարյան, Գրաբարի դարձնաձայնական բառարան, Եր., 2012, էջ 224-225):

Ժամանակակից հայերենում էլ քիչ չեն նման կապակցությունները: Շնորհակալական իմաստը հաճախ է դրսևորվում «խոսքային բանաձևերի» միջոցով, որոնք Պ. Պողոսյանն այսպես է սահմանում. «խոսքային բանաձևեր են կոչում զանազան գործառնություններով հանդես ելող կաղապարային արտահայտությունները» (Պ. Մ. Պողոսյան, խոսքի մշակույթի եւ ոճագիտության հիմունքներ, հ. 2, Եր., 1991, էջ 200): Առավել հետաքրքիր են շնորհակալական իմաստով դարձվածային միավորները, օրինակներն ու բարեմաղթությունները: Դրանք ավելի ցայտուն են արտահայտում ժողովրդի լեզվամտածողությունը, օրինակ՝ **յոթ որդով սեղան նստես, աջքալույսի գաս, աջք բարին տեսնի, աջքերիդ լույս գա, օ-**

Շնորհակալական իմաստ արտահայտող միավորները ժամանակակից հայերենում

ջայտ շեն կենա, աղ ու հացդ հալալ լինի, աստղդ միշտ փայլի, Աստված արեւդ երկարե, Աստված լինի քո օգնականը, Աստված բարին տա եւ այլն (Մ. Մ. Մուրխասյան, Ս. Մ. Գալստյան, 3այոց լեզվի դարձնաձայնական բառարան, Եր., 1975): Զանի որ հայերենը հարուստ է դարձվածներով, առաձևերով, ասացվածքներով, թեւավոր խոսքերով, այս միավորների տեղին կիրառությունը հարուստ, հետաքրքիր ու գունեղ է դարձնում խոսքը:

Խոսելով դարձվածային միավորների կիրառության մասին՝ Խ. Բաղիկյանը նշում է. «*Դարձվածային միավորի կիրառումը պայմանավորված է հարդորակցման իրավիճակով, խոսքի համատեքստով ու խոսքային միջավայրով: Այս երեք գործոնները միասին ծառայում են որպես դարձվածի իրականացման միջոց*» (Խ. Բաղիկյան, Ուսումնական դարձվածաբանական բառարան, Եր., 2002, էջ 3): Այդ պատճառով էլ տարբեր իրադրություններում տարբեր միավորներ են գործածվում: Օրինակ՝ երբ մեկը մյուսին ջուր է տալիս, ասում են՝ *կանքդ ջրի նման երկար լինի կամ երկարի*: Այսինքն՝ կան կոնկրետ գործողությանն առնչվող եւ չեզոք շնորհակալական բառեր, բառակապակցություններ, արտահայտություններ: Օրինակ՝ «*Աստծու աջք գլխիդ լինի*» կամ «*ուղեք բարին դեմ չառնի*» կապակցություններն առհասարակ որեւէ լավ արարքի համար ասվող օրհնանքի խոսքեր են: Առօրյա-խոսակցական լեզվում, մտերմիկ շրջապատում, հատկապես երեխաներին ուղղված խոսքում կիրառվում է «ապրես» շնորհակալական իմաստ արտահայտող բառը, որը նաեւ օրհնանքի դեր է խմատ ունի:

Չպետք է կարծել, թե շնորհակալական իմաստ ունեցող նախադասություններն անպայման վերաիմաստավորված են: Նախ կան միայն մեկ դիմավոր բայով արտահայտված շնորհակալական խոսքեր, որոնք ինքնին նախադասություններ են, օրինակ՝ *ապրես, օրհնվես, գորանաս*: Աս-



շուշտ, սրանք էլ օժտված են որոշակի արտահայտչականությամբ, քանի որ հանդես են գալիս որպես մաղթանքներ, սակայն էապես տարբերվում են վերը նշված վերաիմաստավորված նախադասություններից: Կան նաեւ ոչ համառոտ նախադասություններ, որոնք եւս վերաիմաստավորված չեն:

Քննենք հետեւյալ նախադասությունները.

1. *Շնորհակալ եմ քո արած լավության համար:*
2. *Շնորհակալ եմ բարի վերաբերմունքի համար:*
3. *Յոթ որդով սեղան նստես:*
4. *Ըն աղ ու հացդ քեզ հալալ լինի:*

Այս նախադասություններից առաջին երկուսը շնորհակալական իմաստ են արտահայտում առանց փոխաբերական իմաստի, իսկ հաջորդ երկու նախադասությունները շնորհակալական իմաստ են արտահայտում փոխաբերաբար: Նշենք, որ վերջին երկու են նման նախադասությունները բուն առումով շնորհակալական իմաստ չեն արտահայտում, սակայն շատ ազգերի մեջ է ընդունված լավությանը պատասխանել դարձվածային միավորով, օրինակներով կամ պարզապես բարեմաղթանքով: Ընդհանրապես շատ հետաքրքիր է վերլուծել շնորհակալություն արտահայտող միավորների եւ լեզվամտածողության կապը: Օրինակ՝ ռուսերենում շնորհակալական իմաստ արտահայտող բառերը հե-

տաքրքիր կրթերանգներ ունեն: *Благодарить* բառում ավելի շատ շեշտված է բարին, լավը տալու իմաստը՝ *благодарить* եւ *дарить*, իսկ *спасибо* բառն ավելի շատ բարեմաղթանքային, օրհնանքային կրթերանգ ունի՝ *спаси бог, айсինքն՝ Աստծու փրկությունը եւ օգնությունը դիմացինին բարեմաղթելու իմաստ է արտահայտում: Այս բառին երկու բացատրություն է տրվում: Ռուսերենում ժողովրդական ստուգաբանության մեջ կան հետեւյալ կարծիքները. «спасибо» բառն ասելով՝ հասկանում են՝ Աստված փրկի, պահպանի ինչ-որ բանից: Ասելով «спасибо»՝ մարդիկ քեզ փրկություն են ցանկանում՝ ենթադրելով, որ դու մեղավոր ես: Սրանից ելնելով էլ՝ ռուսերենում կա մի քանի պատասխան: Մի դեպքում պատասխանում են՝ *не за что, айсինքն՝ ես ոչ մի վատ բան չեմ արել, պետք չէ ինձ փրկել: Այս՝ не за что արտահայտության համարժեքը հայերենում «չարժե»* բառն է, որի կիրառությունը հավանաբար իմաստային պատճենման հետեւանք է: Մյուս դեպքում պատասխանում են՝ *пожалуйста, айсինքն՝ пожалуйста - пожалуйста, նկատի ունենալով՝ ավելի լավ է տո՛ր հարյուր ռուբլի (տե՛ս, <http://ja-rus.ru/spasibo-ili-blagodaryu/>, *Спасибо или благодарю, Скрытое значение слов, Н. Румянцев, 2012*):* Ինչպես նշվեց, սրանք ժողովրդական ստուգաբանություններ են:*

Քանի որ օրհնանքի խոսքերն առհասարակ բարեմաղթանք են, իսկ շնորհակալություն հայտնելիս մեք փորձում ենք բարին հատուցել բարու դիմաց, ուստի օրհնանքի խոսքերն էլ այս պարագայում ճիշտ եւ տեղին հնչող արտահայտություններ են: Շատ բարեմաղթանքներ ուղղակի կապ չունեն շնորհակալության եւ առկասարակ շնորհակալական իմաստ արտահայտող լեզվական միավորների հետ: Դրանք հաճախ հանդես են գալիս գուտ որպես բարեմաղթանք, բարի խոսք: Այսպիսով՝ շնորհակալական իմաստ արտահայտող լեզվական միավորներն արտահայտության առումով կարող ենք բաժանել հետեւյալ խմբերի.

1. բառեր,
2. բառակապակցություններ,
3. դարձվածային միավորներ,
4. նախադասություններ:

Սրանցից բառակապակցություններն ու նախադասությունները բովանդակային առումով կարելի է բաժանել երկու խմբի՝ բուն շնորհակալական եւ այդ գործառնությամբ գործածվող:

Ինչպես տեսնում ենք, շնորհակալական իմաստ արտահայտող բառերը ու կապակցություններն էապես պայմանավորված են լեզվամտածողության յուրահատկություններով: Այս փոքրիկ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայերենում շնորհակալություն հնարավոր է հայտնել տարբեր եղանակներով, լեզվական ամենատարբեր միջոցներով ու ձևերով:

Շնորհակալություն կարելի է հայտնել խիստ հակիրճ եւ բավական երկար՝ մեկ բառով կամ ամբողջ նախադասությամբ: Ընտրության հարցում կարելի է իրադրությունը, միջավայրը, ոճերը եւ այլն: Շնորհակալական գործառնությամբ հանդես են գալիս նաեւ դարձվածային միավորներ, օրինակներ, մաղթանքներ:

Նշենք, որ հունվարի 11-ին ողջ աշխարհում Նշվում է Շնորհակալության միջազգային օրը:

Վիկտորյա ՄՈՒՐԿԱՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Սկզբը՝ էջ 7

Բայց լույս աղոթքով ու խնդրանքով չեն մաքրվի մեղքից. զոջալ է հարկավոր, գիտակցել է պետք մեղքերի ահավորությունը եւ թողություն հայցել, ինչպես այդ անում է միջնադարյան հայ քնարերգության լուսապայծառ հանճարը՝ ս. Գրիգոր Նարեկացին, իր սրբազան մատյանում: Աշուղներից ոմանք էլ այդ կերպ՝ ամենայն անկեղծությամբ ու խորին ակնածանքով զոջումի ու աղերսանքի խոսքեր են հղում առ Աստված՝ թողություն հայցելով իրենց մեղքերի համար: Ահա մի այդպիսի նմուշ թիֆլիսահայ մեծահամբավ աշուղ Ավան օղանի երգերից.

*Ուրազի իմ քիզ, Արարիչ,
Էնդուր չարիս չար էլաւ,
Խախանովի ա ճանապարհս,
Կենքս դարբեդար էլաւ,
Տարեկուսեցաւ անառակն, դեպի հայրն գնաց,
Նընգաւ ոտին, մեղայ կանչից,
Նրան Էնդով ճար էլաւ:
Ուրիշն էսպես դար չը քաշէ,
Ինչպես յիս նիդացիլ իմ,
Խնամող իս, ամենայն կարող,
Մոքիս դուռն քացիլ իմ,
Տանցուիմ մաքսատրի պես,
Երանքս ի վեր լացիլ իմ,
Նորոգէ ողորմութիւնդ, չուն մարդս տրկար էլաւ...*

ՅԱՅ ԼՇՈՒՂԱԿԱՆ ԱՐԿԵՍՏԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Նմանօրինակ տաղերը մեզ հիմք են տալիս ենթադրելու նաեւ, որ Նարեկացին մեծագույն հեղինակություն էր եւ ճշմարիտ օրինակ աշուղների համար: Գուցե դա է նաեւ պատճառը, որ հոգեւորական դարձած տեր Ստեփանոս - Սայաթ-Նովան արտագրել, ընդօրինակել է ոչ միայն ձեռագիր մի աղոթքամատյան, այլեւ Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը (տե՛ս Երեւանի Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր համար 4270, թ. 257 եւ ձեռագիր համար 10838):

19-րդ դարավերջին, Մեծ եղեռնի վտանգից գատ, հայության գլխին մի վտանգ էլ կախվեց՝ Արեւմուտքից «ներմուծվող» տարատեսակ աղանդների տարածումը: Աշուղներից ոմանք, ցավոք, մոլորվեցին ու շեղվեցին ճշմարիտ հավատից, բայց վտանգն առավել մեծ էր հատկապես երիտասարդության համար: Խորապես հասկանալով աղանդների տարածողների բուն նպատակն ու կեղծավորությունը՝ հայ

աշուղական Նոր դպրոցի հիմնադիր մեծանուն Զիվանին, դիմելով աղանդավոր քարոզիչներին, իր երգում ասում է.

*Թող ինչպես ընկել եմ, այնպես վեր կենամ.
Դիմակավոր ընկեր, խրատդ պետք չէ,
Թող իմ հորս, պապիս ճամփովը գնամ,
Յավատ ունիմ, քո Նոր հավատդ պետք չէ...*

Սակայն, այսուհանդերձ, պետք է նշենք, որ «չնկատելով» կարծես այս փաստերը (թերեւս պարզ է, թե ինչո՞ւ)՝ համալսարանական տարիներին փորձ էր արվում մեր անցյալի մեծերի, այդ թվում նաեւ աշուղների արվեստը հակադրել 3այոց Եկեղեցուն՝ հավատացնելով, թե Եկեղեցին իր գործունեությամբ միշտ խոչընդոտել է լուսավորական գաղափարների տարածմանն ու գիտության զարգացմանը: Այդ նպատակով էլ հայ քնարերգության մեջ առանձնացվում էին հատկապես այն ստեղծագործու-

թյունները, որոնցում քննադատվում կամ ծաղրվում էին կրոնավորներն ու եկեղեցական գործիչները: Այո՛, աշուղների ստեղծագործություններում էլ երբեմն հանդիպում ենք որոշ հոգեւորականների որկրամոլությունն ու շահամոլությունը քննադատող ուսանակությունների: Այդուհանդերձ՝ նրանք խորին հարգանք են տալիս անվանի հոգեւորականների ու բարեպաշտ մեծամեծների նկատմամբ՝ քննադատության սլաքն ուղղելով միայն նրանց դեմ, որոնց գործելակերպն ազգադավ ու հակաքրիստոնեական են համարում: Քննադատվում են առանձին կրոնավորներ, բայց ոչ երբեք՝ կրոնը: Ուստի ավելի մեծաթիվ են հարգանքի արժանի հոգեւորականներին ձուլված գովաբանությունները, ինչպես Շամշի Մելքի «Ով սուրբազան Յոսեփ, մինձ կաթողիկոս...» սկզբածքով խաղը կամ Յաղոբ օղու «Կանն Ներսէս կաթողիկոսի» բանաստեղծությունը: Դետեարքար կարելի է ասել, որ աշ-

խարհիկ անձինք լինելով, աշխարհիկ թեմաները գրականության նյութ են աշխարհաբար գրական լեզու դարձնելով հանդերձ՝ հայ աշուղները Քրիստոնեական Եկեղեցու ճշմարիտ հավատացյալներ են՝ իսկական քրիստոնյաներ:

Տիգրան ՄԱՐԳԱՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅՈՒՆՈՒՆ

Կրոնական, մշակութային, լուսավորական երկշաբաթաթերթ **Յիմադիր՝**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին **Յրատարակիչ՝**

«Քրիստոնյա Յայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Մտամբղյան

Գրանցման վկայական՝ 624 **Խմբագրության հասցեն՝**

Մայր Աթոռ Սբ Էջմիածին **Ֆեռախոս՝ 517197**

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am astghikstam@gmail.com

web կայք՝ kh-tert.livejournal.com krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 17.12.2015 թ.

Տպագրանակ՝ 2100 **Գինը՝ 50 դրամ**